Գետափ

Մակերես՝ 11.89կմ^2

Բնակչություն՝ 183

Գյուղ Թալինի տարածաշրջանում, Թալին քաղաքից 21 կմ արեւմուտք, Երեւան- Գյումրի երկաթգծի վրա: Մարզկենտրոնից գտնվում է 71 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Կարակուլա, Ղարաղուլա, Զարաղուլա Ներքին անվանումները: Գետափ է վերանվանվել 1946 թ-ին:
Գյուղի արեւմուտքում՝ ձորալանջին, կառուցված է կարմիր քարից շինված մի հին եկեղեցի, որը, ըստ տեղացիների, կոչվում է՝Կարմիր վանք՝:
Գյուղը գտնվում է ծովի մակարդակից 1315 մ բարձրության վրա: Գտնվում է Ախուրյան գետի ձախ ափին: Կլիման չափավոր ցամաքային է, աչքի է ընկնում ցամաքայնությամբ: Ամառները տաք են եւ չոր, ձմեռները՝ ցուրտ, ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -5,-6-ի սահմաններում, հուլիսյանը՝ 22-24-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 350-400մմ: Բնական լանդշաֆտները չոր տափաստաններն են:
1873 թ-ին ունեցել է 181, 1897 թ-ին՝ 416, 1939 թ-ին՝ 361, 1959 թ-ին՝ 310, 1979 թ-ին՝ 246 բնակիչ: Համայնքի բնակչությունը կազմում է 175 մարդ, որից 47% տղամարդիկ են, իսկ կանայք՝ 53%: Մինչաշխատունակ տարիքի բնակչությունը կազմում է 27%, աշխատունակ տարիքի ներկայացուցիչները՝ 56%, հետաշխատունակները՝ 17%: Գյուղն ունի 49 տնտեսություն: Ունի տարրական դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:
Գյուղատնտեսական հողահանդակները ոռոգվում են Ախուրյան գետի ջրերով: Համայնքի հողային ֆոնդի մոտ 20% սեփականաշնորհված է: Հողահանդակները օգտագործվում են որպես վարելահողեր: Տնամերձ հողերում կան բազմամյա տնկարկներ: Զբաղվում են բանջարաբոստանային, հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ, այգեգործությամբ: Պահուստային հողերը մեծ մակերես են զբաղեցնում, որոնց գրեթե 1/3-ը դեռեւս չեն օգտագործվում: Վերջիններիս մեջ վարելահողերը կազմում են 200 հա, արոտավայրերը՝ 450 հա, խոտհարքերը՝ 5 հա:
Արդյունաբերություն չունի: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարեւորվում է ոռոգման ջրի ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը: